**Հաստատված է**
**Պետության և իրավունքի**
**տեսության և սահմանադրական**
**իրավունքի ամբիոնի 28. 08. 2017 թ.**
**նիստում (արձ. թիվ 1)**
**Ամբիոնի պետ՝**

**.....**
**(ստորագրություն)**
**.....**
**(ամիս ամսաթիվ)**

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ**
**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**
**(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)**

| | | |
|---|---|---|
| **ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ** | | ՀՀ մունիցիպալ իրավունք |
| | | |
| **ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ** | | |
| | | |
| **ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | Իրավագիտություն, վճարովի ուսուցում |
| | | |
| **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** | | Իրավագիտություն |
| | | |
| **ԱՄԲԻՈՆ** | | Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի<br>E-mail: pitambion@mail.ru |
| | | |
| **ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ** | | Մ.Մանուկյան<br>E-mail: marymanukyanmmb@gmail.com հեռ. 099101035 |
| | | |
| **ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ** | | 2-րդ կուրս, 1-ին կիսամյակ |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ** | | բակալավր |

| | | |
|---|---|---|
| **ԿՐԵԴԻՏՆԵՐ** | | **2 (երկու)** |
| | | |
| **ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ** | | «Մունիցիպալ իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 60 ժամ, որից 20 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար պարապմունք, 28 ժամ ինքնուրույն աշխատանք:<br>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը 2 լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ստուգարք հանձնելով: |
| | | |
| **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ** | | Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «ՀՀ սահմանադրական իրավունք» դասընթացի իմացության վրա: |
| | | |
| **ՀԱՄԱՌՈՏ** | | «ՀՀ մունիցիպալ իրավունք» դասընթացի շրջանակներում |

| | | |
|---|---|---|
| **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ** | | ուսումնասիրվում են մունիցիպալ իրավունքի հասկացությունը, կարգավորման առարկան, համակարգը, խնդիրները, սկզբունքները, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հասկացությունները, մունիցիպալ իրավունքի սուբյեկտները, տեղական ինքնակառավարման երաշխիքները, տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը, տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները Երևան քաղաքում, համայնքների իրավական կարգավիճակը, բազմաբնակարան շենքերի և համատիրությունների կառավարումը: |
| | | |
| **ՆՊԱՏԱԿ**<br><br>**ԽՆԴԻՐ/ՆԵՐ** | | Դասընթացի նպատակն է սովորողներին ծանոթացնել հանրային իշխանության ճյուղերից մեկի՝ տեղական ինքնակառավարման հետ և ուսումնասիրել պետական կառավարման և տարածքային կառավարման հետ տեղական ինքնակառավարման կապի առանձնահատկությունները: Դասընթացից սովորողը կստանա համակարգված և ամբողջական գիտելիքներ տեղական ինքնակառավարման իրականացման ուղիների, համակարգերի վերաբերյալ, որը նրան հնարավորություն կընձեռի տեղական ինքնակառավարմանը մասնակցել լիարժեք գիտելիքներով, ինչպես նաև կապահովի համապատասխան մասնագիտական որակավորում, կնպաստի տեղական ինքնակառավարման վերաբերյալ ստացած գիտելիքների կիրառությանը:<br><br>Դասընթացի խնդիրներն են հանդիսանում.<br>1. Իրավունքի համակարգում մունիցիպալ իրավունքի տեղի և դերի որոշումը<br>2. Կառավարում, տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում հասկացությունների կապի բացահայտումը<br>3. Տեղական ինքնակառավարման դերի որոշումը պետական կառավարման գործընթացում<br>4. Տեղական ինքնակառավարման երաշխիքների ուսումնասիրումը<br>5. Ժողովրդավարության տեղական համակարգերի ձևավորման և կատարելագործման հնարավոր ուղիների ուսումնասիրումը<br>6. Տեղական իշխանության մարմինների գործունեության յուրահատկությունների և հիմնախնդիրների ուսումնասիրությունը<br>7. Պետական և տեղական իշխանության մարմինների փոխհարաբերությունների վերլուծությունը<br>8. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավաբանական պատասխանատվության ուսումնասիրումը<br><br>Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ոստիկանության կապի ուսումնասիրումը: |
| | | |

| | | |
|---|---|---|
| **ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**<br>***Կարողանա՝*** | | 1. բացահայտել մունիցիպալ ինստիտուտների փոխադարձ կապը<br>2. հանրային իշխանության իրականացման համակարգում որոշել ժողովրդավարության դերն ու նշանակությունը<br>3. բացահայտել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման փոխադարձ կապն ու առանձնահատկությունները<br>4. ինքնուրույն ծանոթանալ ոլորտում կատարվող նորմատիվ փոփոխություններին<br>5. ուսումնասիրել և առաջարկություններ ներկայացնել տեղական կառավարման համակարգերի զարգացման և կատարելագործման վերաբերյալ |

| | | |
|---|---|---|
| **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** | | |
| | | |
| **Հիմնական** | | 1. Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք: Ուսումնական ձեռնարկ /ընդհանուր խմբագրությամբ Գ.Դանիելյանի.-Երևանի պետ. համալս.- Հարյապետ, 2015, 384 էջ:<br>2. Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում / Յու. Մ. Սուվարյան եւ ուրիշներ.– Եր.: Տնտեսագետ, 2014 –164 էջ.- («Ամբերդ» մատենաշար):<br>3. Մասնակցային Ժողովրդավարությունը տեղական ինքնակառավարման մակարդակում: Ձեռնարկ. – Եր «Ասողիկ», 2013. - 118 էջ<br>4. «Ինչպե՞ս մասնակցել տեղական ինքնակառավարմանը», «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնություն. Երևան 2015թ.<br>5. Համայնքային զարգացումը քաղաքացիական ինքնակազմակերպման գործընթացում : Ուսումնական ձեռնարկ, Կաժոյան Հրաչյա, Երևան 2009թ., 210 էջ<br>6. «Տարածքային կառավարումը Հայաստանի Հանրապետությունում» Մ.Ալեքսանյան, Երևան: Միվա-Պրես, 2000 – 164 էջ: |
| | | |
| **Լրացուցիչ** | | 1. Кутафин О.Е., Фадеев В.И. Муниципальное право Российской Федерации:Учебник.-2-е изд., перераб. и доп.-М.:Юристъ,2002.- 559 с.<br>2. Шугрина Е. С. Муниципальное право Российской Федерации: учеб. — 2-е изд.,перераб. и доп. — М.: ТК Велби, Изд-во Проспект, 2007. — 672 с.<br>3. Муниципальное право России: учебник (отв. ред. С.А. Авакьян). - Проспект, 2010 г. 369 с.<br>4. Муниципальное право России: учебник /С.А.Авакьян, В.Л.Лютцер, Н.Л.Пешин[и др.];отв. ред.С.А.Авакьян.-Москва: Проспект, 2011.- 544 с.<br>5. Татаринов С.А. Муниципальное право Российской Федерации: Учебно-методический комплекс. – Томск: Изд-во Том. ун-та, 2014. – 136 с.<br>6. Программа дисциплины «Муниципальное право», профессор И.И.Овчинников, Москва 2015г. ст. 46<br>7. Муниципальное право: учебно-методическое пособие И. Н.Иваненко, П. М. Курдюк, Н. В. Павлов, А. С. Чуева. –Краснодар :КубГАУ, 2016.– 52 с |

| | | |
|---|---|---|
| | | |

| | | |
|---|---|---|
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ** | | Ստուգարք (ստուգված, չստուգված) |
| | | |
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ** | | Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:<br>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:<br>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝<br>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.<br>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.<br>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.<br>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները: |
| | | |
| ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| **Ներկայություն** | | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:<br>Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: |
| **Գրավոր աշխատանքներին ներկայացվող** | | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: |

| | | |
|---|---|---|
| **պահանջներ**<br><br>**Ինքնուրույն և գործնական աշխատանքներ** | | Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:<br>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

## ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

| **Թեմա 1**<br>**ՀՀ մունիցիպալ իրավունքը որպես իրավունքի ճյուղ**<br>**(2 ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Մունիցիպալ իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը:<br>2. Մունիցիպալ իրավունքի համակարգը և աղբյուրները:<br>3. Մունիցիպալ իրավունքի տեղը ՀՀ իրավական համակարգում:<br>4. Մունիցիպալ-իրավական նորմերը և ինստիտուտները, դրանց իրագործումը:<br>5. Մունիցիպալ-իրավական իրավահարաբերությունները և դրանց աղբյուրները | Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1-5 – սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում, հետադարձ կապի միջոցով ներկայացված նյութի յուրացման ստուգում:<br>Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| **Թեմա 2**<br>**Տարածքային կառավարման հասկացությունը**<br>**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Տարածքային կառավարման հասկացությունը: Տարածքային կառավարման սկզբունքներ (հասկացությունը և տեսակները):<br>2. Տարածքային կառավարման մարմինների խնդիրները և գործառույթները (հասկացությունը և դասակարգումը):<br>3. Մարզպետը՝ որպես տարածքային կառավարումը իրագործող սուբյեկտ<br>4. Մարզպետարանի աշխատակազմը (մարզպետարանի աշխատակազմի իրավական վիճակը, կառուցվածքը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի լիազորությունները, պետական ծառայությունը աշխատակազմում):<br>5. Մարզի խորհուրդը: | Հարցեր 1-5 - կարդացվում է դասախոսություն, ներկայացվում է սխեմատիկ պատկեր:<br>Հարցեր 1-5- Սեմինար պարապմունք: Ստուգվում են ընթացիկ առաջադրանք-ները և նյութի ընկալման աստիճանը, տրվում են ստուգիչ հարցեր, կատարվում է նյութի ամփոփում:<br>Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: |

| **Թեմա 3**<br>**Տեղական ինքնակառավարման հասկացությունը, սկզբունքները և գործառույթները**<br>**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |

| | |
|---|---|
| 1. Տեղական ինքնակառավարման հասկացությունը: Տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության համակարգում:<br>2. Տեղական ինքնակառավարման սկզբունքները և ֆունկցիաները: ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի հասկացությունը և տարրերը:<br>3. Գործադիր իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների փոխհարաբերությունը: | Հարցեր 1-3 - Անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Տրվում են հարցեր քննարկման համար, մեկնաբանվում են պատասխանները:<br>Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք, հանձնարարված առաջադրանքների ստուգում, խնդրահարույց հարցերի քննարկում: |

| **Թեմա 4**<br>**Տեղական ինքնակառավարման երաշխիքները**<br>**( 2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության երաշխիքների հասկացությունը:<br>2. ՏԻՄ-երի գործունեության իրավական երաշխիքները: ՏԻՄ-երի կողմից ընդունած ակտերը:<br>3. ՏԻՄ-երի գործունեության տարածքային երաշխիքները:<br>4. Մունիցիպալ սեփականություն: Տեղական բյուջե: | Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն :<br>Հարցեր 1-4 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով): Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ:<br>Ինքնուրույն աշխատանք. Ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի ժամանակ: |

| **Թեմա 5**<br>**Համայնքների իրավական կարգավիճակը**<br>**(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Համայնքների հասկացությունը, համայնքը որպես իրավաբանական անձ, համայնքների սեփական լիազորությունները, պատվիրակված լիազորությունները:<br>2. Համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի բյուջեի հասկացությունը, ձևավորման կարգը:<br>3. Համայնքների դասակարգումը:<br>4. Միջհամայնքային միավորումների հասկացությունը, ձևավորման կարգը, միջհամայնքային միավորումների իրավասությունը: | Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին:<br>Հարցեր 1-4 – անցկացվում է սեմինար պարապմունք: Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված համապատասխան մասնագիտական գրականություն ուսումնասիրելով: |

| **Թեմա 6** |
|---|

| Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, կարգավիճակը և դրանց գործունեության երաշխիքները: ( 4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար) | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության հասկացությունը:<br>2. Համայնքի ավագանու իրավական կարգավիճակը և լիազորությունները:<br>3. Գյումրու և Վանաձորի ավագանիների ձևավորման կարգը:<br>4. Համայնքի ղեկավարի իրավական կարգավիճակն ու իրավասությունները:<br>5. Տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքական և իրավական պատասխանատվությունը:<br>6. Համայնքի աշխատակազմը: | Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն: Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են հաջորդ դասախոսության և սեմինար պարապմունքի ժամանակ:<br>Հարցեր 1-4 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:<br>Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի ժամանակ: |

| Թեմա 7<br>Համայնքային ծառայություն<br>( 2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Համայնքային ծառայության հասկացությունը, սկզբունքները:<br>2. Համայնքային ծառայության պաշտոնների դասակարգումը, պաշտոն զբաղեցնելու կարգը:<br>3. Համայնքային ծառայողների իրավական կարգավիճակը, պատասխանատվության ենթարկելու կարգը: | Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են ներկայացված թեմայի հիմնադրույթներին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննակման:<br>Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը, իրավական ակտերին և քննարկում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերը: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| Թեմա 8<br>Տեղական ինքնակառավարումը Երևան քաղաքում<br>(2 ժամ դասախոսություն) | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Տեղական ինքնակառավարման առանձնահատ-կությունները Երևան քաղաքում: | Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն: Ուսանողին տրվում է |

| | |
|---|---|
| 2. Տարածքային կառավարման առանձնահատ-կությունները Երևան քաղաքում:<br>3. Երևանի ավագանին (իրավական վիճակը և գործառույթները, կազմակերպման կարգը կառուցվածքը, իրավասությունը և իրավական ակտերը, գործունեության կազմակերպումը, Երևանի ավագանու անդամի իրավական վիճակը և լիազորությունները):<br>4. Երևանի քաղաքապետը (իրավական վիճակը և գործառույթները, ընտրության և լիազորությունների դադարեցման հիմքերն ու կարգը, իրավասությունը և իրավական ակտերը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը, Երևանի վարչական շրջանները և դրանց ղեկավարումը):<br>5. Երևանի քաղաքապետի լիազորությունները ավագանու հետ հարաբերություններում: | համապատասխան նյութը:<br>Հարցեր 1-5 - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման ձևով: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, հետադարձ կապի միջոցով նյութի ընկալման աստիճանը, տրվում են ստուգիչ և ամփոփիչ հարցեր: |

## ՀԱՐՑԱՇԱՐ
## «ՀՀ մունիցիպալ իրավունք» առարկայի

1. Մունիցիպալ իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը:
2. Մունիցիպալ իրավունքի համակարգը:
3. Մունիցիպալ իրավունքի աղբյուրները:
4. Մունիցիպալ իրավական նորմեր և հարաբերություններ:
5. Մունիցիպալ իրավունքի կապը իրավունք այլ ճյուղերի հետ:
6. Տարածքային կառավարման հասկացությունը, սկզբունքները և բնորոշ գծերը:
7. Մարզպետի իրավական կարգավիճակը և իրավասությունը:
8. Մարզպետի կողմից իրականացվող հսկողության տեսակները:
9. Մարզպետարանը, որպես տարածքային կառավարման մարմին:
10. Մարզի խորհուրդ:
11. Տեղական ինքնակառավարման հասկացությունը և բնորոշ գծերը:
12. Տեղական ինքնակառավարման սկզբունքներն ու գործառույթները:
13. Տեղական ինքնակառավարման իրավական երաշխիքը:
14. Տեղական ինքնակառավարման տնտեսական երաշխիքը:
15. Տեղական ինքնակառավարման տարածքային երաշխիքը:
16. Տեղական ինքնակառավարման կազմակերպական երաշխիքը:
17. Համայնքը՝ որպես իրավաբանական անձ:
18. Համայնքի լիազորությունները:
19. Համայնքի բյուջեն:
20. Համայնքի զարգացման ծրագիրը:
21. Միջհամայնքային միավորումներ:
22. Տեղական ինքնակառավարման մարմինները:
23. Համայնքի ղեկավարին ներկայացվող պահանջները:

24. Համայնքի ղեկավարի լիազորությունները:
25. Համայնքի ղեկավարի լիազորությունների դադարեցման հիմքերը:
26. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու կարգը:
27. Համայնքի ղեկավարի աշխատակազմը:
28. Համայնքի ավագանու իրավական վիճակը:
29. Համայնքի ավագանու նիստերի անցկացման կարգը:
30. Համայնքի ավագանու լիազորությունները:
31. Համայնքի ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը:
32. Համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:
33. Համայնքային ծառայության առանձնահատկությունները:
34. Համայնքային ծառայության պաշտոնի անցնելու կարգը:
35. Համայնքային ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները:
36. Տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները Երևան քաղաքում:
37. Երևանը որպես տեղական ինքնակառավարման սուբյեկտ:
38. Երևանի խորհրդանիշները:
39. Երևանի քաղաքապետի լիազորությունները և իրավական ակտերը:
40. Երևանի քաղաքապետի գործունեությանն օժանդակող մարմինները և պաշտոնատար անձինք:
41. Երևանի քաղաքապետի լիազորությունները գործադիր իշխանության հանրապետական մարմինների և դրանց քաղաքային ծառայությունների հետ հարաբերություններում:
42. Երևանի ավագանու ձևավորման և գործունեության կարգը:
43. Երևանի ավագանու լիազորությունները:
44. Երևանի քաղաքապետի լիազորությունները ավագանու հետ հարաբերություններում:
45. Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարման առանձնահատկությունները: